

մապատիկ ցնծութեամբ որք հաղորդք հան-
դիպեցան այսմ խրախուժեանս», եւ այլն:

Բ. Ապա կը մորթէին ու կ'եփէին ա-
նասունը, եւ կը պատրաստէին սեղանն՝
ինչպէս տեառնականի առթիւ կ'ընէին
(աստ, 350): Եւ նստելէ յառաջ կը պաշ-
տէին «Աւրհնութիւն սեղանոյ տեառնա-
կանի եւ պատարագի» ըստ ԺԱ դարու
Մաշտոցին (աստ, 350), կազմուած միակ
աղօթքէ մը, որոյ հետագայ համառօտու-
թեան մէջ կ'ամփոփեմ կարեւորագոյն կէ-
տերը, որոնք կը վերաբերին սեղանին,
ննջեցելոյն ու նուիրողին: Աւասիկ. «Աւր-
հնեալ ես Տր. Ած. ամենակալ հայր Տն.
մերոյ Յի. Քի. որ առիթ սիրոյ պատրաս-
տեցեր քո ծառայիցս բարեպաշտել առ
քեզ սեղանովք բարութեան: Խնդրեմք ի
քնն Տր. եւ աղաչեմք, ընգալ եւ աւրհ-
նեայ զուխտ պատարագիս այսորիկ... եւ
յիշատակեայ զհոգիս հանգուցելոյն ընդ
սուրբս քո ի փառս քո...: Յիշեայ Տր.
ողորմութեամբ քո զմատուցող պատարա-
գիս, եւ կատարեա ի բարի զխնդրուածս
սորա», եւ այլն:

Գ. Եւ որովհետեւ հոգեհանգստեան նուէր
կընային լինել արմտիք ալ, նոյն Մաշ-
տոցն ունի յատուկ «Աւրհնութիւն հատի
պատարագի», զատ սովորական մատաղի